Զապել Եսայան

Նամակ Սոֆի Եսայանին 1

1931, օգոստոսի 26, Բարիզ

Սոֆի Եսայանին

Ահա դարձյալ Բարիզում եմ: Երկուշաբթի օրը անձրևներից և արգելափումից ձանձրացած, որոշել էի Պուգից հեռանալ, ու դրա մասին հայտնել էի Տատային: Բայց երկուշաբթի օրը Բարիզից ստացա մի նամակ, որով ինձ իմացնում էին, որ Հայաստանի կոմիսարների խորհրդի նախագահ Տեր-Գաբրիելյանը ժամանել է Բարիզ, մնալու է ընդամենը մի շաբաթ, որ եթե ուզում եմ նրան տեսնել, ապա պետք է անմիջապես վերադառնամ: Կարող ես պատկերացնել, թե ինչպիսի փութկոտությամբ փակեցի ճամբրուկս: Ես մեկնեցի ժամը 3-ի գնացքով և Բարիզ հասա ժամը 7-ին: Մաթիլդը սպասում էր կայարանում: Տաքսի նստելով՝ մենք գնացինք նրա բնակարանը (Բալաք փողոցում), որտեղ և գիշերեցի: Այս առավոտ միայն եկա տուն, և ահա գրում եմ սույն տողերը: Հիմա պիտի պատրաստվեմ, որպեսզի գնամ խմբագրություն:

Նախագահի ժամանումն ինձ հույս է ներշնչում, որ շատ բան պիտի կարգավորվի տեղնուտեղը: Բայց ավելի լավ է՝ կանխատեսություններով չզբաղվենք: Ես քեզ տեղյակ կպահեմ գործի ընթացքի մասին:

Համբուրում եմ երկուսիդ և սպասում լուրերին:

Զապել

Հ. Գ. Պուգում բոլորն էլ լավ էին: Տեղատարափ անձրևներին վերջ չկար: Դար աննկարագրելի մի բան էր: Վերջապես ազատվեցի այդտեղից:

Բնագիրը՝ ԳԱԹ, Զապել Եսայանի ֆոնդ, № 178 (թարգմանություն ֆրանսերեն բնագրից)

, Բարիզ